

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի է, կես տարվանը 6 ռուբլի:
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանից խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լիզուով:

Յայտարարութիւնները համար վճարում են
իրաւաւոր ըստ 2 կոպեկի:

ԵՐԵՎԱՆ 1892 ԹԻՎԱԿԱՆԻՆ

20-ՐԴ ՏԱՐԻ

20-ՐԴ ՏԱՐԻ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Հրատարակվում է Թիֆլիսում, նոյն զիւրքով և նոյն պրոգրամայով: Մենք ստանում ենք սեփական շնորհակալութիւններ:
«ՄՇԱԿ» տարեկան գինը 10 ռուբլի է, տասն և մէկ և տասն ամսականը՝ 9 ռ., ինն և ութ ամսականը՝ 8 ռ., յոթ ամսականը՝ 7 ռ., վեց ամսականը՝ 6 ռ., հինգ ամսականը՝ 5 ռ., չորս ամսականը՝ 4 ռ., երեք ամսականը՝ 3 ռ., երկու ամսականը՝ 2 ռ., մի ամսականը՝ 1 ռուբլի:
Գրվել «ՄՇԱԿ»-ին կարելի է ՌԵԴԱԿՏՈՐԱՏԻՆ (Բարձրագույն և Բարձրագույն փողոցների անկիւնում, Թատմանիկի տանը):
Կայանքութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿ»-ին գրվելու համար պէտք է դիմել հետևեալ հասցեով. ТИФЛИСЪ, Редакция газеты «МШАКЪ», իսկ արտասահմաններից. Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK»:
Յայտարարութիւնները ընդունվում են թէ հայերէն, թէ ռուսերէն և թէ օտար լեզուներով: Բառերը վճարվում է 2 կոպեկի:
«Մշակ» առաջին երեսի վրա մասնաւոր յայտարարութիւններ չեն տպագրվում, այլ տպագրվում են միմյանից լրագրիչների յայտարարութիւնները, մասնացումները և պաշտօնական հաստատութիւնների յայտարարութիւնները, որոնց համար կրկնակի է վճարվում: Մասնացումների տպագրելը առաջին երեսի վրա արժէ 4 ռուբլի, իսկ չորս և քիչ քան 2 ռուբլի:
Խմբագրութեան հրատարակող ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԱՐՈՒՄԸ

Յունվարի 6-ի աղետից մեռած անձանց ընտանիքների օգտին հանգանակութիւն անող և նպաստներ բաժանող ՄԱՍՆԱԺՈՂՈՎԸ ընդունում է ԱՄՆԵՐ ՕՐ Քաղաքային վարչութեան մէջ՝ աղետից մեռած անձանց աղքատներին զբաւոյն տալու խնդիրները:
Իսկ ԱՆՁՆԱԿԱՆ քաղաքութիւնների և ԲԵՐԱՆԱՅԻ խնդիրների համար Մասնաժողովը ցանկացողներին հրաւիրում է նիստերի օրերին գալ Քաղաքային վարչութեան բնակարանը ՀԻՆԳՍԱՐԻՈՒ օրերը, երեկոյան 7 ժամից սկսած:

ԲՈՎԱՆԻՍԿՈՒԹԻՒՆ

Առաջին ընտրութիւններից յետոյ.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արիստակէս եպիսկոպոս Սեդրակեան. Նամակ Հին-Նախնային. Նամակ Բագրի. Նամակ Եղեղ. Նամակ խմբագրի. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՐԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.—ՀԵՆՈՒԳԻՐՆԵՐ.—ԲՈՐՍԱ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱՅԱՆ. Նկատողութիւններ:

ԱՌԱՋԻՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ ՅԵՏՈՑ

Կիրակի, յունվարի 26-ին, կատարվեցան պատգամաւորների ընտրութիւնները Թիֆլիսում:

ԲԱՆԱՍԻՐԱՅԱՆ

ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

II

Էջմիածնի տեղի ունեցած վարչական վերջին փոփոխութիւնը և դրա հետ նոր ընթացիկ հաստատվելը, ինչպէս յայտնի է, առաջացրել է յոյս, որ նախկին ընթացիկ վիճակում գործերը կարգի կը բերվին, արդար լուծուած կը ստանան այնպէս, ինչպէս ժողովուրդի և եկեղեցու շահերն են պահանջում: Եւ այդ յոյսը, որի իրականացման նշանները չեն կարող ուրանալ անգամ անպատճառ հակառակորդ լինելու դեռում կերպերով, փոքր բան չէ մեր անգոյն, ընտրութեան ներքին կեանքի մէջ:
Բոլորովին աւելորդ է ծածկել ամեն մէկի իմացածն այն մասին, որ նոր կարգերի, նոր ընթացիկի հեղինակաւոր և ազդեցիկ մարդն է գերազաւուր Արիստակէս եպիսկոպոս Սեդրակեան, որը գործում է ամենապատիւ ճիշդակալ հօր հետ: Մեր առաջին են սխալել արած կարգադրութիւնները, «Արարատի» զարմանալի պարզ հաշիւները, որոնք նոյն սխալից են դուրս գալիս: Նորութեան հոտ է բուրում այդ ամենից: Եւ նրանք, որոնք Արիստակէս սրբազանին են ցոյց տալիս իբրեւ հեղինակ այդ նորութիւնների, բոլորովին չեն սխալվում: Գործիչն իր գործերից է յայտնի: Սրբազանին նորից ճանաչելու կարօտութիւնը չունենք մենք: Չենք կարող ճիշդ թաղանթի գրութեան տակ, կասեմք, որ հենց այնքան լաւ ճանաչել:

Ընտր այն հայոց եկեղեցիներում, որոնք գտնվում են Կուր գետի աջ կողմի քաղաքամասում: Փետրվարի 2-ին կը կատարվեն նոյն ընտրութիւնները Կուր գետի ձախ կողմում գտնվող քաղաքամասի եկեղեցիներում:

Որքան իմացաք՝ ընտրութիւնները գրեթէ բոլոր եկեղեցիներում կատարվել են հանգիստ կերպով և ժողովուրդը ամեն տեղ իրան վայել կերպով էր պահում: Չենք կարող, ուրիշ կողմից, չը շնորհաւորել մեր հոգեւոր իշխանութիւնը, որ նա զիջանելով ընտրողներին և «Մշակ» արդար պահանջներին:

Եւ այժմ առաջ եկել այն ստուգարարութիւն կուսակցութիւնը, որը այժմեան ընթացիկ իր լաւագոյն յոյսերը սրբազանի անձնաւորութեան հետ է կապում և արտայայտում է բուռն ցանկութիւն տեսնել նրա առաջ գործունէութեան աւելի լայն, աւելի մեծ ասպարէզ:

Իրաւաւոր կուսակցութիւն, ի հարկէ, ունի իր դասանանքները: Ոչ ոք չէ կարող չը յարգել համոզմունքի վրա հաստատուած կուսակցութիւնը: Մեր միտքը կուսակցութիւնների մասին խօսելը չէ և ոչ էլ այն մասին թէ որ կուսակցութիւնը որքան է համապատասխան մեր կեանքի իրական պահանջներին ու ցանկութիւններին: Կարծում ենք, որ իրերի պարզ դրութիւնը յաղթանակ տանելու շարժումը է և որ մի օր է միտք տիրապետող նշանակութիւն կը ստանայ ստուգարարութիւնը երկրպագուների շնորհով:

Մենք միայն կը կամենայինք նոր ընթացիկ կուսակցութեան շահերը պաշտպանել և այդ պատճառով չենք կարող անուշադիր թողնել մի տղեղ երեսով, որ այժմ մեր մէջ է երանա գալիս: Մենք կը խօսենք այն մարդկանց մասին, որոնք ոչ մի կուսակցութեան չը պատկանելով, առաջ են եկել այժմեան ժամանակ իրանց անձնական հաշիւները մարքելու համար:

Մենք յոյս ենք տածում, որ թուրութեան, անշարժութեան դարաշրջանը անց ենք կացրել, որ մեզ շատ մօտ է մի ժամանակ, երբ խնամութիւն, ազգակցութիւն, կաշառքի միջոցով ձեռք բերած բարեկամութիւն կը չընան, կը հեռանան և մեր գործերը կաշառքի այդ խեղդող աղեղութիւններից: Սակայն այդ յոյսի, այդ ցանկութիւնների մէջ ինչ մաս կարող են ունենալ այնպիսիները,

չին, բոլոր եկեղեցիներում շատ խելացի կարգադրութիւն արեց. հրամայված էր նախազանգող քահանաներին առաջարկել ընտրողներին, նոյն իսկ ընտրութեան սկզբում, նշանակել իրանց միջոց երկու անձինք, որոնք նախազանգող քահանայի և նրա կողմից ընտրած երկու անձանց հետ միասին հետեւէին ընտրութեան, վերաստուգելին ճիշդակցութիւն անուանացուցակները, բաժանէին ընտրողական տոմսերը, կարգաւորին այդ տոմսերը և համբէին ձայները:

Շնորհով այդ կարգադրութեան այդ առաջին կիրակիայ ընտրութիւններն ամեն տեղ խաղաղ անցան, և ընդհանրապէս շատ աշուղ:

Յոյս ունենք որ նոյն օրինակելի և խելացի կարգապահութեամբ, նոյն հանդարտ և խաղաղ կերպով ժողովուրդը կը վերաբերվի և դէպի յաջորդ, փետրվարի 2-ի ընտրութիւնները:

Ուրախակի էր և այն, որ այս անգամ ոչ մի տեղ չէր նկատվում մեր հասարակութեան սովորական և աւանդական անտարբերութիւնը դէպի ընտրութիւնների գործը, և բոլոր եկեղեցիներում ընտրողները ներկայացան մեծ բազմութեամբ, ներկայացան անհամեմատ աւելի մեծ թուով, քան օր և է ժամանակ եղած պատգամաւորական ընտրութիւններին:

«Մշակ» ներկայ համարի ներքին տեսութեան բաժնում ընթերցողները կը գտնեն առ այժմ քաղաքի 12 եկեղեցիներում ընտրված եկեղեցական պատգամաւորների անուանացուցակը:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐԻՍՏԱԿԵՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԵԴՐԱԿԵԱՆ

«Нов. Обозрѣніе» լրագրի մէջ կարդում ենք Արիստակէս եպիսկոպոսի հետեւեալ կենսագրութիւնը:

որոնք իրանց ամբողջ էութեամբ, իրանց անցեալով բացառուած են այդ տեսակ գաղափարի մաքուր անօթ զաւնայալ հնարաւորութիւնը: Ինչ գործ ունի, օրինակ, հարուստ, հաստափոր բուրժուան, որը ուսել, կեղեցիկ, հարստահարել է սովորել, այն երիտասարդի հետ, որ քաղցած է մնում ագնիւ լինելու համար, որն իր անձը դնում է հասարակութեան օգտին և կերակրվում է երազանման իդէալներով, որի կեանքը մի անընդհատ մրրիկ է հենց այդ հաստափորների չըջնալու: Երկուսի—հաստափոր կեղեցիկ և իդէալից մաշված երիտասարդի մէջ չէ կարող լինել առնչութիւն, շահերի, հայեացքների համեմատելիութիւն: Այդպէս էլ համաձայնութեան կէտ չը կայ արդարութիւն, անհուրթիւն, մաքուրութիւն պահանջող կուսակցութեան և այն մարդկանց մէջ, որոնք հաշիւներ պարզելու, անձնական թշնամութեան, կիրք յագեցնելու մաքուր են տոչորվում:

Ինչպէս են յանդգնում իրանց գոյութիւնը մտցնել գաղափարի կուսակցութեան մէջ նրանք, որոնք ոչ մի ժամանակ այդ կուսակցութեան չեն համակրել, միշտ թշնամի են եղել նոր մտքի, նոր ուղղութեան քարոզիչներին: Ներանք ունեն մտքի, ունեն շահի անկախութիւն: Տիրապետող կարծիքի ետեւից գնալով, այդպիսիները կամենում են մի հարուստով երկու նապաստակ սպանել. ձեռք բերել ժողովրդակալութիւն, ոգեւորութեան ժամանակ անիրաւաբար յափշտակել համակրութիւն և հաշիւներ մաքրելու համար ունենալ իշխանութիւն, վայելել հեղինակութեան հովանաւորութիւնը: Իսկ այսպիսի նպատակից աւելի ինչ զգուշիւ բան կարող է լինել: Մեր խորին համոզմունքն է, որ արդարութիւն

էջմիածնի գահի համար թիւրքաց հայերի ցանկացած հինգ կանդիդատներից ամենից շատ ժողովրդականութիւն ունեցող կարելի է համարել Թիֆլիսի թեմի նախկին առաջնորդ Արիստակէս եպիսկոպոս Սեդրակեանին:

Արիստակէս եպիսկոպոսը ծնվեց 1845 թ.ին Երևանեան նահանգի Սուրմալու գաւառի Խաչի-Լու գիւղում: Սկզբնական կրթութիւնն ստացաւ Էջմիածնի «Ճառանգաւորաց» դպրոցում, ուր ուսում է առել և Երևան եպիսկոպոսը: Սակայն ընդունալ և աշխատասէր լինելով, նա դպրոցից դուրս գալուց յետոյ, մեծ եռանդով սկսեց ինքնակրթութեամբ պարապել և գիտութիւնների բաւական մեծ պաշար ձեռք բերեց: 1863 թ.ին նա սարկաւագ ձեռնադրվեց Մօսկվայի հայ եկեղեցում ծառայելու համար: Բայց նրա թոյլ օրգանիւնը չը կարողացաւ դիմանալ հիւսիսային կլիմային. երկու տարուց յետոյ նա Մօսկվայից վերադարձաւ Էջմիածնի, վարդապետ ձեռնադրվեց, և 1866 թ.ին գնաց Կ. Պօլիս:

Այնտեղ նա եկեղեցիներից միում քարոզչի պաշտօն է ստանում և մի և նոյն ժամանակ շարունակում է ինքնակրթութեամբ զբաղվել, այս անգամ ֆրանսերէն լեզուով:

Նոր տարեայ վերջում Բնասարբայի այն ժամանակվայ թեմական առաջնորդ արքեպիսկոպոս Նեղիաւորը հրաւիրում է Սեդրակեանին իր մօտ և տանում է նրան իր հետ Մօսկվա և Պետերբուրգ:

Գրանից մէկ տարի անցած Սեդրակեան նշանակվում է Դուշու թեմի առաջնորդի փոխանորդ: Բայց այդ պաշտօնում նա միայն հինգ ամիս է մնում, որից յետոյ Ցախի յաջորդ է նշանակվում:

1869 թ.ին, նրա խնդրել համաձայն, ուղարկվում են նրան Երեւանի ս. Կարապետ նշանաւոր վանքի վանահայրի պաշտօնով: Հինգ տարի մնալով այնտեղ, նա 1874 թ.ին կրկին Էջմիածնի է կանչվում, ուր Գեորգ IV կաթողիկոսը, իր նորաբաց հոգևոր ձեռնարանի ուսուցիչ կարգելով նրան, ուղարկում է երիտասարդ վարդապետին անդրկովկասեան զանազան քաղաքները՝ նոր ձեռնարա-

նը պիտի անողը, խիստ, պատժող լինի և հաւատում ենք, որ մեր ցանկացած արդարութիւնը արժանի պատիւ կը հասցնէ առաջ հենց նրանց, որոնք այժմ դիմակաւոր հերոսներ են ձևանում և իրանց գործունէրով ուղարկութեան արժանանալ են ուղում: Այդ, արդարութիւնը դրանց կը պատժէ, պարզելով նրանց մեղը, կէտ առ կէտ շարելով նրանց յանցանքները: Մենք այդ կողմից բոլորովին ապահով ենք: Մնում է որ հասարակութիւնը ճանաչէ այդպիսիներին, մնում է որ գործելու կանչված կուսակցութիւնը այդպիսիներին տայ արժանի պատիւը—իր խորին արհամարհանքը: Որտեղ էլք այն ժամանակ, երբ մեր ձայնը ճնշված էր, երբ մենք արհամարհված էինք,—այս պէտք է ասել դիմակաւոր հերոսներին: Մենք կուտւմ էինք անարդարութեան դէմ, մենք ատում էինք փոստ խնամովութիւնը, լաւաւոր, անպիտանութիւնը, բայց այն ժամանակ դուք չը կայրէք մեղ հետ, այն ժամանակ դուք ձեռք արարեցիք կամենում էիք կաշառել այն, ինչի դէմ մենք մաքաւում էինք: Կաշառել կեղծաւորութեամբ կարելի էր, ուղարկութեան արժանաւորութեամբ հնարաւոր էր, բայց ոչ այժմ, մեղ հետ:

Այդ դիրքը պիտի բռնէ կուսակցութիւնը մեր նկարագրած մարդկանց վերաբերմամբ: Եւ այն ժամանակ գաղափարը չի արատաւորվի, այլ կը մնայ մաքուր, փայլուն և կը դրաւէ շատ և շատ սրտեր, որոնք ճշմարտութեան, արդարութեան անկեղծ բարեկամներն են:

Լէօ

նր համար աշակերտներ ընտրելու նպատակով։ Ապա հետևեալ 1875 թին նա թիֆլիսի Ներսիսեան դպրոցի հայոց լեզուի և գրականութեան ուսուցիչ է նշանակուիմ, իսկ 1876 թին վերջը Շուշու թեմի կառավարիչ։

Այդ պաշտօնում նա երեք տարի է մնում, մի և նոյն ժամանակ ստիպւած լինելով անընդհատ կուրս մղել իրան թշնամի կուսակցութեան դէմ, որը յայտնի է թէ ինչու չը սիրեց երկուստարդ և գործունայ վարդապետին։ Ապա նա կրկին հրաւիրուիմ է Նախաժին և կրկին նշանակուիմ է ձեռնարանի ուսուցիչ։ Այստեղ, երկու տարուց յետոյ, 1882 թին, Գեորգ IV կաթողիկոսից եպիսկոպոս ձեռնադրուելով, Արիստակէսը վարստանի և իմէրէթի թեմի առաջնորդ է նշանակուիմ։

Այդ պաշտօնը հայոց հոգևոր ինքնավարութեան շատ նշանակալի է համարուիմ, և այդ պատճառով միշտ այդ պաշտօնը տրուիմ էր անշուք և անպակասներին, որպէս էր հանդուցեալ գիտնական Այվազեան Գաբրիէլ եպիսկոպոսը։ Համեմատաբար շատ երկուստարդ Արիստակէս եպիսկոպոսին սկզբուիմ, ի հարկէ, հնչող չէր գործել նոր շրջանում, և կատարել թեմական առաջնորդի բարդ պարտաւորութիւնները։ Բայց շնորհով իր քնակաւ ընդունակութիւններով, համակրելով բնաւորութեան, եռանդին և թիֆլիսի հայ հասարակութեան ինտելիգէնտ մասին դէպի նրան տածած յարգանքի և պաշտպանութեան, նա շուտով բարձր դիրք է բռնուիմ։

Այստեղ տեղը չէ երկար խօսել Սեդրակեան եպիսկոպոսի, որպէս թեմի առաջնորդի գործունէութեան մասին։ Բայց չէ կարելի գտնել կարճատև կերպով չը թեւ նրա կատարած մի քանի գլխաւոր գործերը։ Նրա ջանքերին է պարտական տեղական կոնսիստորիան, որ այժմ ունի մի շքեղ և ընդարձակ շինութիւն։ Նրա նախաձեռնութեամբ է հիմնուիմ և հարստացած տեղական հոգևորականութեան նպատակով կառուան, որը այժմ կարողանում է օգնութիւն հասցնել վախճանված քահանաների ընտանիքներին և որդիներին։ Նրա ժամանակը ձեռնադրուիմ թիֆլիսի թեմի այժմեան քահանաներից ամենալաւերը, նա իր թեմի զանազան տեղերում բացեց մի քանի տասնեակ դպրոցներ և նախապէս ապահովեց նրանց դպրութիւնը։ Նա աշխատում էր, և այդ նրան աշուղտեց, իր հօտի զոհաբերութիւններով, նորոգել մի ամբողջ շարք հնագոյն վանքերի, որոնք անտես էին թողնուիմ իր նախորդներից։

Քիչ օգուտ չը բերեց և թիֆլիսի հայոց դպրոցներին։ Ներսիսեան հայոց դպրոցից միայն նրան աջողկեց հեռացնել շատ ամուր արժաններ բռնած հին բուսիկներ դասաւանդներին, որոնք ունէին հասկացողութիւն չունէին ժամանակակից մանկավարժութեան մասին, և փոխարինել նրանց նոր, երկուստարդ ուսուցիչներով։ Սե, վերջապէս, որպէս այդ դպրոցը, նոյնպէս և միւս դպրոցները նրա շնորհով են ստացել հարուստ հայերի կտակած շատ դրամագումներ։

Ահա թէ ինչ էր պատճառը, որ երեք տարի առաջ, երբ Սեդրակեան եպիսկոպոսը, մի քանի հանգամանքներից զրոյված, ցանկացաւ թողնել թեմական առաջնորդի պաշտօնը, թիֆլիսի հայ հասարակութիւնը շատ յուզուեց և չէր կամենում բաժանուիլ իր սիրած և եռանդոտ հովուից, հասարակութիւնը, համարեա արտասուքները աչքերին, բաժանուից իր սիրելի հովուից, ձանաղագործ ընկերուց առաջ պատուելով նրան մի ճաշով, որին ներկայ էին տեղական վարչութեան շատ ներկայացուցիչներ։

Սեդրակեան եպիսկոպոսի անունը մասն ունի և հայ գրականութեան մէջ։ Նա թարգմանել է մի քանի լուրջ գրքեր, ի միջի այլոց Գրեյպերի «Եւրոպայի մտաւոր զարգացման պատմութիւնը», Ժընէվի համալսարանի պրօֆէսոր Էրնէստ Նալիլի «Յաւանական կեանք», Հակոբ-հատուկի «Հնապարհօրէութիւնը»։ Նա է կաղմուց և հրատարակել Մուշեղի և Վանի երգերի հաւաքածուն «Վանար» վերնագրով։ Իսկ նրա ինքնուրոյն աշխատութիւններից կը յիշենք «Երեմիայի գաւառի հնութիւնները», նոյնպէս և ձանաղագրահորդական նկատողութիւնները, որոնք տպուիմ էին «Արձագանք» լրագրում։ Այդ երկու գրութեանը հետոյ և թանգագին նիւթեր են պատմագրողի համար։ Վերջապէս անցեալ տարի Սեդրակեան եպիսկոպոսը հրատարակեց «Ամուսնական ինդիկներ» վերնագրով իր ամենալուրջ աշխատութիւնը, որը առիթ տուեց մի շարք յօդուածների տպուելուն հայ մամուլի մէջ՝ ժամանակակից զանազան հարցերի վերաբերմամբ։

Ներկայումս Սեդրակեան եպիսկոպոսը պարուիմ է իշխանութեան, սինօդի անդամ է և եռանդուն կերպով մասնակցում է հայոց եկեղեցու նշանաւոր գործերում։

ՆԱՄԱԿ ՀԻՆ-ՆԱԽԻՋՆԻԱՆԻՑ

Յունվարի 18-ին

Ամսիս 11-ին պատահած հետեւեալ աղետալի գէպը մինչև հիմա օրուան խօսակցութեան նիւթն է կազմում։

Շախ-Մահմուդ գիւղացի հայ կին և մարդ գնալիս են լինում Աստաբադ գիւղը, իրանց մի բարեկամին տեսութեան (ձանաղագրի անցնում է Նախիջևանի միջով), բայց հազիւ կէս վերստ հեռացած լինելով քաղաքից, այն բլուրից ներքե, որ գտնուիմ է Նոյի տապանը և հայոց գերեզմանատունը, օրը կէս օրին, մի քանի սրկաններ յարձակուիմ են և անխելճ կերպով կոտորում ողորմելի արարածներին։ Սպանելու պատճառը յայտնի չէ, միայն չարագործները տարել են մարդու արծաթէ գօտին և կնոջ դարձերը։

Ինչպէս երևում է, վերջին յուսահատական ճգնաժամում, տարաբաղդ կինը ազատուելու վերջին փորձն է անում, ուղղելով իր փախուստը դէպի Նախիջևան։ Մարդուց յետոյ քայլ հեռաւորութեան վրա ընկած է լինում կնոջ գլխի շաւը, մի շիւ գլխի, մի շիւ օղի, կնոջ մատերից մէկը և մարդու գօտիկի մի արծաթէ կրծակը, իսկ մարդուց մօտ երկու հարկի յետոյ քայլ հեռաւորութեան վրա ընկած է լինում կնոջ մարմնը և դեռ վերջին շունչը չը փչած հասնում են ոստիկանապետը և պահապանները։ Փորձում են կնոջը խօսեցնել, բայց իրար. տաւրաբաղդ լինող կինը արդէն հաշիւները վերջացնում է եղել այս աշխարհի հետ։ Նրա արիւնի հեղքը ցոյց էր տալիս, որ նա մի քանի անգամ դուրս է եկել ձանաղագրից, վայր է ընկել և իր վարդապարտի արիւնով ներկել ձեռնակ ձիւնի մակերեսովը և ապա կրկին դառնալով ձանաղագրը, շնչապառ վայր է ընկել, ցրել վերով շուրջը իր մի քանի մատները, կտրտուած լիք է անգուժ զարդկանց դաշոյնով։ Մարմինները բերկեցան ոստիկանատուն, բայց դեռ ձանաղագրին լինող կինը փչում է և իր վերջին շունչը։ Ահա այսպիսով մեռնում է մի հայ ընտանիք, քանդուիմ է մի հայի օջաղ և յաւիտեան կտրուիմ է նրա տան ծովը։ Ամենից դոհեր։ Ասում են որ չարագործները բռնված են 3—4 հոգի։

Այս տարի մեր հասարակական գործերը երեսի վրա են ընկած։ Մեր սիրողների խումբն էլ թմրում է։—Ուսումնական տարին մօտենում է իր վախճանին, սակայն մենք ոչ մի ներկայացում չունենանք։ Ինչպէս լսում ենք իրաւունք է ստացված և շուտով բացվելու է քաղաքում ընթերցարանը։ Չմոռն այս տարի աննկատելի էր անցնում սակայն վերջին օրերս զգացնեք որ ձմեռ է և այսօր շատ խոր ձիւն եկաւ այստեղ։ Լաւ գինիները արժէն 1 բուրուց—1 բ. 40 կ. իսկ հասարակը 60 կ.—80 կոպէկ—պուրը։

Ս. Դ.

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒՅՑ

Յունվարի 23-ին

Մի խումբ վրացի սիրողների պատրաստուիմ են տեղիս կուրբի դահլիճում վրացերէն ներկայացում տալու յօդուտ Ռուսաստանի սովետների և յունվարի 6-ին թիֆլիսում պատահած աղետից վնասվածներին։ Յանկանալով անպատճառ կարեկցած ու օգնած լինել թշուառներին, մեր այլապի պարոնները ոչ միայն մասնաւոր նուիրատուութիւններով են բաւականանում, այլ և միապես այդ ոյժերով միջոցներ են ձեռնարկում, ջանք են գործ դնում՝ առաւել նպաստած, առաւել կարեկցած լինելու համար։ Օտարազգիները պարտաւորութիւն են համարում հայ տաւապետների համար հոգալու, ժամանակ են գտնում միջոցներ օրհնելու, հաւաքական ոյժերով ներկայացումներ դուրս բերելու, իսկ հայերը... Ինչ են անում հայերը, հայ երկուստարդները.—հայերը ժամանակ չունեն, նրանք զբաղված են, նրանք միջոց չունեն իրանց աղետահար աւրիւնակներին մի քանի տասնեակ ընտանիքների վշտացած սրտերն ամբողջելու, նրանց համար հոգալու, նրանց, գէթ բարոյապէս մխիթարած լինելու։

Նկուռ։ Վրացի երկուստարդները, տեղս գտնված իրանց մի երկու տասնեակ ընտանիքների ներկայութիւնից օգուտ են քաղում, նրանց յայտով պատրաստուիմ են ներկայացում տալու, թիֆլիսի սից յատուկ այդ նպատակով դերասանուհի են հրաւիրում, իսկ հայ երկուստարդները ոչ միայն չեն աշխատում օգտուել իրանց հոգաւորութեան անխելճ քննարկում, այլ նոյն իսկ ներկայացումներին համար չեն հոգում, որ անհամեմատ աւելի հեշտութեամբ կարելի է աշուղենել, քան վրացերէն ներկայացումը։

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒՑ

Յունվարի 21-ին

Մինչդեռ ամեն տեղ զբաղված են կաթողիկոսական ընտրութիւնների համար պատգամաւորներ ընտրութեամբ, այստեղ դեռ յայտնի չէ, թէ երբ են լինելու եկեղեցական պատգամաւորներ և թեմական պատգամաւոր ընտրութիւններ։ Սրա մասին այժմեանից պէտք է յայտարարել և որոշել թէ եկեղեցական և թէ թեմական պատգամաւորներ ընտրութեան օրերը։ Բացի սրանից պէտք է «հրահանգ» տպագրել և տարածել ժողովրդի մէջ, ընտրութիւնների եղանակ և այլ կարգերի մասին, որ թիւրիմացութիւններ չը գոյանան։

Ինֆուլցիցան սաստիկ տարածված է այստեղ։ Հայերի մէջ այդ հիւսնադրութիւնը դոհեր է ունենում միայն ծերերից, իսկ թուրքերի մէջ առատ հունձ ունի։ Առատ հունձ ունեն և մեր բժիշկները, որոնք, a propos, իրանց ամենապէտք են համարում և ամեն շոտակ հիւսնադրութիւններ բժշկում...։

Յայտնի է, որ մեր թեմերում մոմաւաճառութեան արդիւնքը թեմական դպրոցներին է յատկացրած։ Մոմաւաճառութիւնը թեմական դպրոցների եկամուտի արդիւնքներից մէկն է կազմում և թեմական դպրոցները միայն իրաւունք ունեն մոմ վաճառելու։ Մինչև անցեալ տարի մեր թեմի մոմաւաճառութիւնը ողորմելի գնով կապալով տրուիմ էր զանազան անձանց, ի հարկէ ջանքաւորից աղատուելու համար։ Բայց անցեալ տարւաւսից մոմը դպրանոցի հոգաբարձութիւնն ինքն է վաճառում, որի շնորհով ի հարկէ, անհամեմատ աւելի արդիւնք է լինում մոմաւաճառութիւնից, քան թէ կապալով տրուած ժամանակին։ Բացի սրանից հոգաբարձութիւնը, որքան կարողանում է, աշխատում է, որ կնոջ մոմ չը վաճառվի։ Անցեալ օրերը հոգաբարձութիւնը 1200 բուրու կնոջ մոմ բռնեց և դպրոցի սեփականութիւն դարձրեց։ Բացի սրանից կան էլի մի երկու կնոջ մոմ ծախողներ, որոնք երկի շուտով նոյն օրը կընկնեն։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՈՒՅՑ

Թիֆլիս, յունվարի 27-ին

Պ. Արքեպի Յովհաննիսեան ինձ մեղադրեց, բայց բանը պարզուից, որ ես Ջորջիսեան աղետի միջոցին օգնութեան գնացել եմ թէ եպիսկոպոսաւորական շինութեան մէջ, թէ Մաղաթեան կղզու վրա և թէ դժբաղդացածների տուն։

Պ. Յովհաննիսեան ոչ թէ միայն չէ խօստովանել իր արած այս սխալութեան, որ կը վայելէր հարկաւ, այլ չէ դադարել մեղադրելուց իր «Արձագանքում»։ Այս վարմունքն է, որ «պղծ, դաւաճարութիւն» և բուրդով պիտաւարակելի է։ Նա դուր է սպասել, որ ես իմ արդարութեամբ լուս կը մնայի նրա անիրաւացի կերպով զգած ստուերի ապիւն։ Նա տեղեկութիւն չորհնելով դարձեալ ճշմարիտ չէ դրել իր «Արձագանքում», իբր թէ՛ «աշխարհ տեսած» պ. Գ. Գոչարեանց լուս է մնացել, ուրով հետեւ պ. բժշկապետը մի օր (նրա 19-ին յունվարի գրութիւն) առաջ, (այսինքն 18-ին յունվարի), հրատարակել է մի հայ թերթում իր բացատրութիւնը, որով իր վրայից էլ բուրդովին հեռացրել է ստուերը և իսպառ մերկացրել պ. Յովհաննիսեանի իրականական ողբին։ Երեւի պ. Յովհաննիսեան սովոր է առանց տեղեկութեան լուս տեսած։

Նրա արդէն ճշմարտութիւնը լուսաւորելու և նրա գցած ստուերը անհետ վախճելու է, նա, պ. Յովհաննիսեան, չէ կարողացել սանձահարել և զսպել իր զայրոյթը, այլ անձաւարացած դիմել է այս կամ այն եղանակին, այս կամ այն ածական բաւերին, որ կարողանայ իրան մխիթարութիւն հայթայթել և այսպէս դուր տեղը լցրել է իր «Արձագանքի» երեք սիւնակը, արտագրելով և «Մշակ» լրագրի այս տարւոյ 6-րդ համարում հրատարակած իմ նամակը և ծաւաւելով նրա ճշմարիտ մտքերը։ Ոչ իմ բացատրութիւնը եղաւ «երեւալական», ինչպէս նա համարեց, որովհետեւ ամեն կողմից էլ հաստատուեց և պնդուեց, այլ նրա վարմունքը նմանում է այն երեւոյթի վարմունքին, որը վախճանում է խոստովանել իր արդէն յայտնուած արարքը, այլ շուտով զանազան անկապ միջոցների դիմում է, որպէս զի էլ թաղցնի։

Լօգիկայից բուրդովին դուրկ նրա գրութեամբ ի միջի այլոց խօսվում է թէ՛ ես չը գնացել օգնելու ուղղակի վանքի բակից, այլ գիմնել առաջ եպիսկոպոսարան, որի բացատրութիւնը արդէն տուել եմ, բայց ոչ նրա հասկացողութեամբ, իբր թէ՛ ես սրբազան եպիսկոպոսիցն էի ուղում իմանալ ձանաղագրի մասին տեղեկութիւն, այն ինչ ինքը չը գնաց ուղղակի, այլ ով գիտէ, էլ ինչ ցուցողական դիտմամբ եկաւ առաջ եպիսկոպոսարան ինձինց յետոյ և դեռ իմ պատասխանից յետոյ մտածել է կառքերով մարդիկ ուղարկել այլ բժիշկներ հրաւիրելու։ Բայց ես հէնց այն բաղկին հրաւիրեցայ և հասայ օգնութեան կոնսիստորիայի շինութեան մէջ։ Վրից կենդանի հանածներից սկսելով։ Մինչ որ պ. Յովհաննիսեան իր այս մտածմունքը իրագործելու օրը ընկածներից ոմանք արդէն աղատուելու և ունեն հասած էին և ոմանք խղիղված։ Եւ ահա այսպէս նրա ուշացած և անօգուտ աշխատութեանն է ամեն ճշդութեամբ յարմարում նրա յիշած լատինական առածը։ Post bellum auxilium—պատերազմից յետոյ օգնութիւն։

Պ. Ա. Յովհաննիսեան ասում է, որ ոչ թէ առաջարկել, այլ պահանջել է ինձինց օգնութիւն գնալու, բայց նրա զրուիման մէջ ոչ մի իրաւունք չը կայ, որի վրա հիմնվել նրա պահանջը—դարձեալ լօգիկա չը կայ նրա «պահանջը» պնդելու։

Նա բուրդովին անտեղի յիշում է Ֆակուլտետի երդումը, որի միտքը նրա հասկացողութիւնից շատ բարձր է, այն ինչ դեռ չէ հասկանում ինչ է նշանակում բժշկի օգնութիւնը, և կարծում է միայն իրեցիպտ գրելն է, որ ամենահասարակ մարդը թիֆլիսում այդպէս չի հասկանալ։

Նա կարծում է թէ՛ այն բժշկի գործունէութիւնը, որ երկար տարիներով ինքնին հաստատված է, արտաքին հանգամանքներից կախումն ունի։ Այն բժշկական արհեստը և գիտութիւնը, որ ես գիշեր և ցերեկ պաշտել և պաշտելու եմ, անկասկած բուրդովին ոչնչացրել է ինձ համար այն երկուցը, որի մասին դուր տեղը խօսում է պ. Ա. Յովհաննիսեան։ Բայց և նրա ասելն էլ թէ՛ «արդեօք ինչ յանցանք պէտք է գործել թիֆլիսում, որպէս զի մեր հասարակութիւնը երեսը դարձնէ յանցանք գործողից յուզված է մեր երկուսիս անձնական վիճակի առթիւ և վկայ է նրա անանդորր հայեցողութեան։ Մի և նոյն ժամանակ երևում է, որ պ. Ա. Յովհաննիսեան յուսալով իր այս վերջին առածի վրա՝ մի քանի ժամանակ առաջ իր «Արձագանքում» դրու պարտեց մեր վաճառականական հասարակութիւնը, գրելով թէ՛ արդէն է վաճառականների համար սուրբ, նրանց խանութի սեղանին է նրանց համար սուրբ սեղան, և այլու թէ՛ հասարակութիւնը չէ դարձրել դեռ ևս իր երեսը նրանից, բայց չի մոռանալ նրա զրպարտութիւնը։ Իսկ ինչ վերաբերում է ինձ, որ ամեն օր հասարակութեան տնքոցը լսում և հոգում եմ, չեմ կարող նրան հասարակութեան համախոհ և կարեկից համարել, մանաւանդ երբ տեսնում եմ նրանից լոկ ցուցումներ և ոչ իրական գործ, ինչպէս այս անգամ։

Բաւական է, էլ ոչ ժամանակ ունեմ և ոչ կամը նրա վարմունքներին և դրուածներին ուշադրութիւն դարձնել։

Միւսա Միւսեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Յունվարի 6-ի աղետից վնասված աղքատ ընտանիքների օգնելու հետեւեալ անձինք ուղարկել են մեզ հետեւեալ գումարները։ Թիֆլիսից Կիւրի Նիւնա Ղամբարեան 10 բուրդ, կաղղուանից ուսուցիչ Բաղրատ Մատթէոսեան 5 բ., Սարկի զամբից Թարուիւն։ Բայեթեանց 5 բ., Գրոշի

